ԱՐՈՒՍՅԱԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱԾԱԿԱՆ // ՄԱԿԲԱՅ ՊԱՐԶ ԲԱՌԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ժամանակակից հայերենում կան զգալի թվով բառեր, որոնք համատեղում են ածական // մակբայ խոսքիմասային իմաստներ ու արժեքներ: Մեկից ավելի խոսքիմասային արժեքներ համատեղող բառերը կոչվում են խոսքիմասային տարարժեք բառեր[1]: Այդ կարգի բառերը իրենց երկատված խոսքիմասային արժեքները ձեռք են բերել լեզվի պատմական զարգացման ընթացքում նախնական մայր արժեքի երկփեղկման հետևանքով: Բնական է, որ նման բառերի նախնական արժեքը հանգում է կամ ածականի, կամ մակբայի:

Մասնագիտական գրականության մեջ ընդունված է, որ մակբայի խոսքիմասային կարգի մեջ մտնող բառերը հիմնականում եղել են նախնական ածականներ, որոնք շարահյուսական մակարդակում մակբայացել են: Այս կարգի լեզվական միավորները կոչվել են շարահյուսական մակբայներ[2] կամ համարվել են ձևաբանորեն չձևավորված ածականական մասնիկներ տարածական նշանակությամբ, որոնք որոշակիացնում են բայական գործողությունը[3]:

Որոշ մասնագետներ էլ մակբայի ձևաբանական կարգի մեջ դասում են լեզ-վական այն միավորները, որոնք որպես որոշիչներ չեն բավարարում այլ խոսքի մասերի[4]:

Հայ իրականության մեջ ած.// մկբ. արժեքներ համատեղող բառերը համարվել են ածականներ, որոնք պահպանելով իրենց խոսքիմասային հիմնական իմաստը և քերականական առանձնահատկությունները ձեռք են բերել մի նոր գործառույթ մակբայական կիրառություն[5]:

Անտարակույս հայերենում ածականն ու մակբայն ունեն ձևաբանական և շա-րահյուսական կարգերի որոշակի աղերսներ, որ պայմանավորված է

---

[1] *Խոսքիմասային տարարժեք բառերի* մասին տես Լ.Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, (Ե., 1985) և Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում (Ե.,1996):

[2] А.М.Пешковский. Русский синтаксис в научном освещении. М., 1938, стр. 116.

[3] В.М.Жирмунский. История немецкого языка. Л., 1938, стр. 172.

[4] Л.В.Щерба. О Частях речи, Сб. Русская речь, 2. Л., 1938, стр. 14-15.

[5] Ժամանակակից հայոց լեզու, հ.2, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Ե., 1974, էջ 136-138:

դրանց բառական ընդհանուր իմաստով հատկանիշի /ընդհանուր գաղափար արտահայտելով: Ինչպես նշվում է լեզվաբանական գրականության մեջ, այդ կարգի բառույթները կարող են հանդես գալ ինչպես որոշչային ու ստորոգելիական, այնպես էլ պարագայական գործառույթներով[8]: Ած.//մկբ. երկարժեք բառերը դասակարգվում են ինչպես ըստ ելակետային խոսքիմասային արժեքի, այնպես էլ ըստ կառուցվածքային գործոնների:

Ըստ ելակետային խոսքիմասային արժեքի, այդ կարգի բառերը լինում են ածականական և մակբայական ծագման, իսկ ըստ կառուցվածքային գործոնի, բաժանվում են պարզ, բարդ և ածանցավոր տեսակների:

Ներկա հոդվածում մենք կդիտարկենք ած.//մկբ. արժեքներ համատեղող պարզ բառերի ուսուցման մեթոդական հնարները (ուսուցման տեխնոլոգիան): Ուսումնական գործունեության տարբեր ձևերն ունեն իրենց ներքին օրինաչափությունները, սկզբունքները, կանոնները և, բնականաբար, իրականացման տեխնոլոգիան մեթոդները: Ուսուցումը ենթադրում է գործունեության երկու ձևերի իրականացում դասավանդում և ուսուցում, որոնք սերտ միասնության մեջ են գտնվում: Այդ առումով, ելնելով մեր կողմից ուսուցանվող թեմայի յուրահատկությունից նպատակահարմար ենք գտնում առանձնացնել դասավանդման և ուսուցման որոշակի մեթոդներ, որոնք կնպաստեն նյութի ամբողջական յուրացմանը:

Մեթոդը որպես կանոն օգտագործվում է որոշակի առաջադրանքի համար, այդ պատճառով էլ ուսուցման մեթոդը որոշվում է ոչ միայն ուսուցման նպատակներով, այլև մանկավարժական և ուսումնական առաջադրանքի տեսակներով: Տարաբնույթ մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը ենթադրում է նյութի յուրացման արդյունավետության բարձրացում: Այդպիսի տեխնոլոգիաներից մեկը մենք համարում ենք ուսումնական աշխատանքը մոդուլներից կազմված ծրագրով:

Մեր մշակած մեթոդիկայի մեջ մոդուլը դիտարկվում է որպես ուսումնական գործողությունների իրացման ծրագիր, որն ունի պլան և տեղեկատվական բանկ: Ըստ այդմ, ած.// մկբ. արժեքներ համատեղող պարզ բառերի ուսուցման կազմակերպման մոդուլային ծրագիրն իրականացվում է մի քանի փուլերով. ա) առաջնային ուսումնական նյութի հաղորդում, բ) ուսումնական նյութի ինքնուրույն մշակում սովորողների կողմից, գ) ուսումնական նյութի վերլուծություն և համակարգում, դ) ամփոփիչ ստուգում (գործնական պարապմունքներ):

---

[8] Գ. Ջահուկյան. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե.,1974, էջ 526-527:

Ուսումնական նյութի հաղորդումից և հանձնարարված գրականության մշակումից հետո գործնական պարապմունքների ընթացքում տրվում են ամփոփիչ ստուգման պրոբլեմային առաջադրանքներ:

Ած.//մկբ. պարզ բառերի ուսուցումը մատչելի դարձնելու նպատակով այդ բա-ռերը մենք կներկայացնենք թեմատիկ խմբավորումներով. քննության այս եղանակը վերլուծության ձևայնացած մոտեցումից բացի ներառում է նաև իմաստային գործոնը:

Արմատական բառերը, որոնք համատեղում են ած.//մկբ. արժեքներ, մեծ մասով ածականներ են, ընդ որում որակական:

Որակական այդ ածականները զգալի տոկոս են կազմում լեզվի բառային կազմում, քննության համար մենք կդիտարկենք դրանց մի մասը միայն: Այդ կարգի բառերից են՝

ամուր	երկար	խաղաղ	համր	մեղմ	սեթևեթ
ամփոփ	զգույշ	խոժոռ	հանդարտ	մոլոր	վատ
անուշ	էժան	խոլ	հանդուգն	շատ	տխուր
արագ	թեթև	ծանր	հեզ	շտապ	ցոփ
արդար	լայն	կայտառ	հպարտ	շվայտ	ուրախ
բարակ	լավ	հակիրճ	ծրի	պայծառ	քաղցր
դանդաղ	լուռ	համառ	մարմանդ	պինդ	քնքուշ
դառն	լուրջ	համառոտ	մաքուր	սուր	և այլն:

Արմատական այս բառերի քննությունը և դրանց երկարժեքության մատուցումը դյուրին դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում դրանց ներսում կատարել իմաստային խմբավորումներ՝ ելնելով արմատների ներքին իմաստաբանությունից: Ըստ այդմ կարելի է առանձնացնել հետևյալ իմաստ-ներն ունեցող բառախմբեր, ինչ-պես՝ որակային, զգայության, աստիճանի, չափի և այլն: Այս կարգի բաժանումները բացարձակ չեն. կարող են լինել բառեր, որոնք միաժամանակ բավարարեն երկու տարբեր խմբերի ներկա-յացվող պահանջները:

1) Ուսումնական մոդուլ. որակային հատկանիշ արտահայտող բառեր, որոնք լրացնում են իրանիշ գոյականների: Այդ կարգի բառերից են՝ ամուր, փափուկ, պինդ, մաքուր և այլն: Նշենք, որ ածանիշ գոյականներին լրացնելու դեպքում դրանց մի մասը գործածվում է փոխաբերաբար:

Դիտարկենք այդ բառերը շարահյուսական մակարդակում:

Հմմտ. Ամուր - ա. 1. պինդ, ուժեղ, Ամուր ծնոտից կուրծքն ի վար կախված Ստվերը կարծես մորուք է մի սև (ՀՍ,2,12): 2. աներեր, հաստատուն, Նա գիտեր Սամվելի ամուր հավատը, գիտեր նրա կրոնական ջերմեռանդու-թյունը (Ր,8,35): 3. ամրապինդ, Գիրքը, նա էլ է նեղվում ընդմիշտ սեղմված ամուր կազմի մեջ (ՊՍ,Ա,490): 4. ապահով, անառիկ, Այս բոլոր հալածա-

կաններն ամեն կողմից փախչում-թափվում էին Լոռոյ ամուր ծորերը, մինչև կհասնեին Դսեղ (ՀԹ,3,25): մ.1. ուժով, պինդ կերպով. Փողը դրեց կառապանի բուռը և ամուր սեղմեց էլեկտրական զանգակի կոճակը (ԿԴ,3,39): 2. ծիգ, կիպ. Որ իմ մազերն ես հանգուցել ամուր Ամեն մի ծառիդ (ՊՍ,Բ,92):

2) Ուսումնական մոդուլ. աստիճանի իմաստ ունեցող բառեր, որոնք արտահայտում են հատկանիշի տարբեր աստիճաններ՝ նվազ, թույլ, սաստիկ երանգներով: Այսպես հատկանիշի իմաստի նվազ կամ թույլ աստիճանի երանգ են արտահայտում մարմանդ, հանդարտ, խաղաղ, քնքուշ, մեղմ բառերը՝ թե ածականի, թե մակբայի արժեքով գործածվելիս:

Հմմտ. Խաղաղ -ա. 1. լուռ, անաղմուկ. Այնպես լուռ է, այնպես խաղաղ մեր սենյակում (ՊՍ,Ա,59): 2. անդորր, անդորրավետ. Իմ խաղաղ երեկոն է հիմա մեղմալույս և տխուր, և անուշ (ՎՏ,1,81): 3. փխբ. հուսադրող. Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում, չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան (ՎՏ,41): մ.1. մեղմ, քնքուշ. Եվ ժպտում ենք խաղաղ նման մանկան (ՊՍ,Ա,30): 2. խաղաղորեն, անվրդով, Գորովագին մայր էր դարձել եվ ապրում էր հաշտ ու խաղաղ (ՊՍ,Ա,185): 3. հանդարտորեն, դանդաղ, Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցանեցեք, Որ խաղաղ ու հանդարտ մահանան (ՎՏ,1,23):

Հատկանշային իմաստի սաստկության երանգ ունեն հետևյալ բառերը՝ պայծառ, հանդուգն, սուր, արագ, շտապ, համառ և այլն:

Հմմտ. Պայծառ - ա.1. լուսավոր, շլացուցիչ. Եվ լույսն եմ ատում, Թեկուզ և պայծառ, Թե չի հանդուրժում մինչև իսկ շվաք (ՊՍ,Ա,380): 2. փխբ. ջինջ, լուսեղեն, Բաց է սիրտս հիմա, գարուն, քո շնչի դեմ, Եկ, ողողիր սիրտս քո խնդությամբ պայծառ (ՊՍ,Ա,19): 3. փխբ. ուրախ, լուսավոր, . Երբ պայծառ օրդ տխուր կմթնի ... Վհատ սոսկում տանջանքով կզգաս (ՎՏ,58): մ.1. պարզորոշ, հստակ կերպով, Հնչում է միշտ խոր ու պայծառ, Եվ խոցում է, և այրում (ՎՏ,289): 2. փխբ. լուսավոր կերպով. Էյ աստղեր, աստղեր, Երկնքի աչքեր, Որ այդպես վառ-վառ ժպտում եք պայծառ (ՀԹ,2,86):

3) Ուսումնական մոդուլ. զգայության իմաստ ունեցող արմատական ածականների մեջ կան երկարժեք բառեր, որոնք ածականական իմաստով արտահայտում են համի հասկացություն, ինչպես անուշ, քաղցր, դառն, կամ էլ ունեն տրամադրության, զգացողության իմաստ առուլգ, կայտառ, առողջ, խոժոռ և այլն[7]:

---

[7] Արմատական ածականների իմաստաբանության քննությունը և նրանց իմաստային վերլուծության սկզբունքների մասին հանգամանորեն տես Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 82-99: Մեր քննության ընթացքում մենք գործադրել ենք ածականների իմաստային բաշխման Գ.Ջահուկյանի առաջարկած սկզբունքները:

Հմմտ. Անուշ - ա.1. քաղցր. Խմենք, հետո բերաններս քաղցրացնենք նրանց թմփլիկ թուշիկների անուշ պաչով (ՊԱ,Ա,425): 2. դուրեկան, ախորժելի, հաճելի. Ախ, օտար քուրեր ինձի տես կուգան ու վրաս անուշ ծաղկունք կը թափեն (ԱԻ,1.141): 3. փխբ. սիրելի, թանկագին, հարազատ. Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում (ԵՉ): 4. փխբ. խաղաղ, հանգիստ, անդորր. Եվ ալիքները մեղմ ծփում էին Անուշ օրորով ինձ անդորր տալիս (ԱԻ,Ա,112): մ.1.հաճելի կերպով. Հեքիաթդ անվերջ օրորում, Իլիկդ խոսում է անուշ (ԿՏ, 285): 2. խաղաղ, անդորր կերպով. Անուշ նիրհեցին ծով, անտառ ու լեռ, Ննջեցին անուշ երկինք ու երկիր (ԿՏ,71):

Զգայության ածականների իմաստային մի տեսակ են դիտվում ցանկության (մղումի, կամքի) ակամա, ցոփ, շվայտ, սեթևեթ. ինչպես նաև զգացմունքի (կրքի, ապրումի) ածականները, ինչպես զգույշ, ապահով, ուրախ, տխուր, վհատ, տրտում, լուրջ, խոլ և այլն:

Հմմտ. Զգույշ - ա.1. զգուշավոր, կշռադատող. ԵՎ չափազանց զգույշ եմ ես, նույնիսկ վախկոտ (ՊԱ,Բ,151): 2. փխբ. խորհրդավոր.Նրա ուշադրությունը գրավեց զգույշ մի սուլոց, որ գալիս էր խոտադեզի կողմից (ՆՉ,3,1213): մ.1. զգուշավոր, զգուշորեն. Զգույշ կոխիր հողը, նախնիների փոշին է (ԴԴ,8,275): 2. փխբ. նրբամտորեն, խորամանկորեն. Նա սիրով մոտ էր թողնում մյուս նախարարներին և սկսում շատ զգույշ գայթակղել նրանց (ԺՅԲԲ):

4) Ուսումնական մոդուլ. չափի արմատական ածականներ, որոնք արտահայտում են տարածական (լայն), ժամանակային (ուշ), քանակային (շատ), կշռային (ծանր, թեթև), գնի (ծրի, էժան) կարգային իմաստներ: Իբրև ածականներ, դառնում են իրանիշ գոյականների լրացումներ, որոշ բառեր էլ անձնանիշ գոյականների են լրացնում հանդես գալով փոխաբերական իմաստներով:

Հմմտ. Ծանր - ա.1. մեծ կշիռ ծանրություն ունեցող. Իսկ մեր արյան գնդիկը մանր Այս երկիր կոչված գնդից ավելի մեծ ու ծանր է (ՊԱ,Ա,402): 2. դժվարին, անտանելի. ԵՎ ո՞վ էր ասում, Որ այնքան ծանր հոգսերը նրա Առներր քո թույլ ուսերի վրա (ՀՍ,2, 74): 3. փխբ. ճնշող. Անտես մի ձեռք ծանր, ինչպես ձուլված կապար, Սրտիս իջել ու ճմլում է (ՊԱ,Ա, 257): 4. փխբ. վտանգներով լի. Ժամանակը դառն, ծանր օրերը... Հասկանալի էր այդ միտքը դաժան (ՊԱ,Ա,86): 5. փխբ. մարմնեղ, մեծամարմին. Ռոմանս, որ երգում էր մարմնով ծանր, վարքով թեթև ինչ-որ Սերի (ՊԱ,Ա,65): մ. դանդաղ, ծանրությամբ բեռնված. Ու օրերիս քարավանը... Հազար ցավով, մարդկանց ցավով ծանր բեռնած ճամփա կերթա (ԱԻ,Ա,103): 2. փխբ. խորը, դժվարությամբ. Հիվանդ նանը տեղի տակին Ծանր տնքաց տխրալի (ՀԹ,1,111): 3. փխբ. ծանրորեն, ծանրությամբ. Սրափը, սակայն, ծանր ու դանդաղ Չոքեց ինձ վրա՝ սև թևերը կախ (ՀԹ,1 ,108): 4. փխբ. ծանրանիստ, հաստատուն կերպով. Ծանր նստել է քարափը ծորում, հյուրընկալ տերը մանկության ծորի (ՀՍ,2,12):

5) Ուսումնական մոդուլ. բնութագրող արմատական ածականներ, որոնք բնութագրում են խոսքը (ոճը) ամփոփ, հակիրճ, համառոտ, և անձանց

ըստ խոսքի կամ դրա ընկալման որակի՝ լուռ, համր, հպարտ, մոլոր, հեզ ,և ըստ վարքի՝ լավ, ազնիվ, արդար, առաքինի, վատ և այլն:

Այս ուղիով առաջացած երկարժեք բառերը ելակետային խոսքիմասային արժեքով մակբայ են, փոխակերպված կառույցներում ածական:

Հմմտ. Լավ - մ.1. հստակ, որոշակի. Բայց Մոսկվայից ... Շատ ավելի լավ ես տեսնում եմ Չորս ծագերը աշխարհի (ՊՍ,Ա,93): 2. խորապես, հանգամանորեն. Բայց պատմության դասը մենք լավ էինք սերտել (ՊՍ,Ա,72): 3. փխբ. բարձր արվեստով. Ո՞վ է ձեր թրքուհուն ավելի լավ երգել ողջ աշխարհում (ՊՍ,Ա,161): 4. ուշադիր, հոգատար կերպով. Աղաչանքս էն ա, որ լավ մտիկ անեք (ՀԹ,3,37): 5. փխբ. միշտ, հավիտյան. Իսկ դու լավ հիշիր, Դու մի մոռանա նորից ու նորից (ՊՍ,Ա,71): ա.1. երջանիկ, բախտավոր. Լավ օրերդ անցան, կորան (ՀԹ,1,31): 2. բարի, բարեսիրտ, սիրելի. Եկեք, ձկնորսներ, Հանեցեք ծովից մեր լավ Մանուշին (ՀԹ,1,307): 3. բարձր, պատվարժան. Աշխարհքում շատ գանձեր կան,- ասավ,- բայց ամենաթանկ գանձը լավ անունն է (ՀԹ,1, 138): 4. ազնիվ, բարի. Ո՞վ չի սիրում, թեկուզ դուշման, լավ արարքը, լավ մարդին (ՀԹ,1, 191):

Ելակետային ստուգում ըստ մոդուլ-առաջադրանքների.

1) Գտեք ած.//մկբ. արմատական երկարժք բառերը և բացատրեք դրանց բառակազմական նշանակությունը, քերականական նշանակությունը, իմաստային նշանակությունը,

2) Առանձնացրեք տրված բառերն ըստ իմաստային-թեմատիկ խմբերի՝ որակային հատկանիշ, աստիճանի, զգայության, չափի, բնութագրող,

3) Ցույց տվեք ած.// մկբ. տարարժեք բառերի ուղիղ իմաստները, բազմիմաստ նշանակությունները, փոխաբերական իմաստները,

1) Վերլուծեք տվյալ տեքստի բառերն ըստ
- խոսքիմասային արժեքների,
- գործառական հատկանիշի,
- կիրառական դերի:

Ծրագրի նպատակն է ուսումնասիրել ած.//մկբ. արժեքներ համատեղող արմատական բառերը, խորացնել սովորողների գիտելիքներն այդ կարգի բառերի կազմության, իմաստային-թեմատիկ խմբերի, իմաստագործառական դերի վերաբերյալ, բացահայտել դրանց առանձնահատկությունները, նշանակությունները, շա-ռահյուսական գործառույթները:

Այսպիսով, պարզ կամ արմատական բառերի տարարժեքությունը քննելիս նկատելի է դառնում, որ այդ բառերը թե՛ ածականական, թե՛ մակբայական արժեքներով գործածվելիս ի հայտ են բերում բազմիմաստություն ուղիղ և փոխաբերական նշանակություններով: Մյուս կողմից էլ դրանք խմբավորվում են ըստ թեմատիկ-իմաստային հատկանիշի որակային, աստիճանի, զգայության, չափի, բնութագրող և այլն: Որոշ դեպքերում էլ արմատական մակբայները ածականական արժեքն արտահայտում են կառույցի փոխկաղապարման հետևանքով՝ համապատասխան կառույցներում դրսևորելով երկարժեք խոսքիմասային նշանակություններ: